



«ՆՈՐԱՎԱՆՔ»
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԱՅՔ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ-ԾՐԱԳՐԱՅԻՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Բարկեն Վարդանյան, Կարեն Վերանյան

ԻՍՐԱՅԵԼՈՒՄ
ՀՐԵՈՒԹՅՈՒՆ-ԲԱՆԱԿ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ
ԱՅԼ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ

Երևան
2018

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0
Վ 301

*Գիրքը հրատարակվում է
«Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի
որոշման հիման վրա*

Վարդանյան Բաբկեն, Վերանյան Կարեն

Վ 301

ԻՍՐԱՅԵԼՈՒՄ ՀՐԵՈՒԹՅՈՒՆ-ԲԱՆԱԿ ՀԱՐԱԲԵ-
ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ
ԱՅԼ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ/ Բ.Վարդանյան,
Կ.Վերանյան. - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2018. - 54 էջ:

Սույն հետազոտությունում ներկայացրել ենք տեղեկատվություն հասարակություն-բանակ հարաբերություններում իսրայելական փորձի վերաբերյալ, հարցի նկատմամբ Իսրայել պետության պաշտոնական մոտեցումներն ու հրեա և այլազգի փորձագետների վերլուծությունները, գնահատականները, որոնք, ըստ մեզ, կարող են օգտակար և ուսանելի լինել հայ զինվորականության համար: Բնութագրվում են հասարակություն-բանակ հարաբերություններում իսրայելական փորձի ռազմաքաղաքական, կրթական, հոգևոր-բարոյական (տեղեկատվական, սոցիալ-հոգեբանական), հրեա զինվորականության մոտիվացիային վերաբերող հարցեր:

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-825-38-0

© «Նորավանք» ԳԿՀ, 2018
© «Հայք» հաստատություն, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	5
1. ՊԵՏԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԵԿՏ	11
2. ԿՐԹԱԿԱՆ ԱՍՊԵԿՏԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ	15
3. ՄՈՎՍԵՍԱԿԱՆ-ՀՐԵՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԻՊԲ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՈՒՄ	26
4. ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ՝ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ	36
5. ԻՊԲ-ՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՅԻԱՆ	46
6. ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՓՈՐՁԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ. ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ	51

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Բարկեն Վարդանյան

«Նորավանք» ԳԿՀ հոգաբարձուների խորհրդի անդամ,
«Հայք» հաստատության տնօրեն

Կարեն Վերանյան

«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ,
Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար

ՆԱԽԱԲԱՆ

Հրեա ժողովուրդը, երկհազարամյա պետականագուրկ և աշխարհացրիվ պայմաններում լուծելու համար իր գոյապահպանման խնդիրը՝ ավելի շատ կարևորեց և հենվեց իր ազգային գաղափարախոսության վրա: Պետականության բացակայությունն ու աշխարհացրիվ վիճակը հարկադրում էին հրեա ժողովրդին այլընտրանքային մոտեցումներով կատարել հրեական համայնքների անվտանգության և վերապրումի ապահովման կենսական խնդիրը:

Դրա շնորհիվ հրեա ժողովուրդն այդ պայմաններում իսկ հիմնականում կարողացավ գրեթե լիովին պահպանել իր ազգային ինքնությունն ու ինքնագիտակցությունը: Հրեության գլխավոր նպատակ-խնդիրը վերապրումի ապահովմամբ իր գոյության պահպանումն ու զարգացումն էր, որի համար հրեությունը անհրաժեշտ պայման համարեց իր հավատքի զորացմամբ՝ հուդայականության պահպանումը, իսկ հասարակական-տնտեսական-քաղաքական և նման այլ հարցերի լուծման համար՝ հարմարվողականությունը:

Այդպես էր համարյա երկու հազարամյակ, մինչև 19-րդ դարը, որից հետո հարմարվողականությունը սկսեց փոխվել ազգային ակտիվ «նախահարձակ» քաղաքականության: Այն է՛լ ավելի ուժեղացավ հրեական Հոլոքոստից՝ ողջակիզումից,

Երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիստական Գերմանիայի կողմից հրեա ժողովրդի դեմ իրականացված ցեղասպանությունից հետո, երբ այդ կապակցությամբ «ոչ մի զիջում» ու «այլևս երբե՛ք» կարգախոսներն արտահայտում էին յուրաքանչյուր հրեայի համոզմունքն ու սկզբունքը՝ այս անգամ արդեն հրեա ժողովրդի պետական՝ շահերի գիտակցությամբ: Կյանքում այդ սկզբունքներով առաջնորդվելու և հրեության անվտանգությունն ապահովելու հիմքում ընկած էին երկու առանցքային դրույթներ. *հավատքը՝* հուդայականությունը, և ըստ այնմ՝ *ազգային-պետական գաղափարախոսությունը*: Մնացած բոլորը՝ բարոյականություն, այլ արժեքներ, ամեն տեսակ հարաբերություններ և այլն, արդեն պետք է համապատասխանեին հրեության հավատքին և դրանից բխող գաղափարախոսությանը:

1948թ. Իսրայել պետության կազմավորմամբ երկրի քաղաքական վերնախավն անմիջապես անցավ պաշտպանական անվտանգության համակարգի ձևավորման նաև իրավական, իրավաքաղաքական հիմքերի ամրագրմանը՝ տարածքային և ուժերի հարաբերակցության անբարենպաստ պայմաններում: Գտնվելով հարևան արաբական պետությունների հետ մշտական պատերազմի պայմաններում՝ երկրի պաշտպանական գերատեսչության պետաիրավական արդյունավետ հիմքերի ամրագրումը բխում էր Իսրայել պետության և համայն հրեության անվտանգության ապահովման առաջնահերթություններից:

Դեռևս մինչ պետության հիմնումը՝ 20-րդ դարի առաջին տասնամյակներին, հրեության քաղաքական-հասարակա-

կան գործիչներն ակտիվ աշխատանքներ են տարել պաշտպանական-քաղաքացիական հարաբերությունների կանոնակարգման ուղղությամբ: Այդ ժամանակահատվածում գործում էին հրեական ընդհատակյա մի շարք ազգային ազատագրական խմբավորումներ, որոնց ներկայացուցիչները զբաղված էին ոչ միայն ռազմական գործողությունների կազմակերպման ու իրականացման աշխատանքներով, այլև հրեական համայնքների տարբեր հոգսերի լուծմամբ, որոնց մեջ առաջնային էին համարվում հրեայի հավատամքի պահպանումը, կյանքով դրան հավատարմությունը, ազգային ինքնագիտակցությունը և կրոնական-ազգային ավանդույթների խստագույնս պահպանումը:

Հրեության գոյատևման ու ազգային պետության հաստատման պայքարի արդյունքում առաջացավ հրեության *«քաղաքացի-զինվորական»*, *«անհատ-զինվորական»* հայեցակարգը: Ըստ վերջինիս, *յուրաքանչյուր հրեա իր մասնակցությունը պետք է ունենա հրեական համայնքների և պետության անվտանգության ապահովման գործին:*

Այդ ընթացքում «քաղաքացի-զինվորական» գաղափարը տարածվում է Իսրայել պետության հրեաների վրա, սակայն «անհատ-զինվորական» հայեցակարգային մոդելը, որը հիմնված է հրեության հավատքի և գաղափարախոսության վրա, բովանդակային-իմաստային առումով անհամեմատ ավելի ընդգրկուն է: Այն, բացի երկրի հրեա բնակչությունից, ներառում է նաև աշխարհասփյուռ հրեությունը, անկախ նրանից, թե վերջինիս ներկայացուցիչներն ինչ քաղաքացիություն ունեն:

Այսպիսով՝ Իսրայելի պաշտպանության բանակի (այսուհետ՝ ԻՊԲ)¹ ստեղծմամբ «անհատ-զինվորական» հայեցակարգը դարձավ երկրի զինված ուժերի կազմավորման և կայացման գործընթացի և առհասարակ հասարակություն-զինված ուժեր փոխգործակցության հիմքն ու հենարանը: Այդ հայեցակարգի գաղափարական բուն էությունն այն էր, որ *համայն հրեության յուրաքանչյուր անհատ միաժամանակ նաև զինվորական է՝ պատրաստ պաշտպանելու Իսրայել պետության անվտանգությունն ու ազատությունը:*

Դրա հիմնադրումից հետո «անհատ-զինվորական» մոդելը նաև զգալի ազդեցություն ունեցավ երկրի զինվորականություն-հասարակություն հարաբերությունների կանոնակարգման վրա, որը նախատեսում էր հասարակության ինտեգրման, մասնակցության մեխանիզմների ներդրումը զինված ուժերի զարգացման գործում: Այդ թվում՝ ԻՊԲ-ի նկատմամբ հասարակական վերահսկողության սահմանման գործիքակազմի կիրառությունը, որի արդյունավետությունը պայմանավորված է բանակաշինության գործընթացի զարգացման հարցում հասարակության ընդհանուր համաձայնության կազմակերպման գործընթացով: Այսինքն՝ որքանով են հասարակության տարբեր կառույցներն ու անհատ քաղաքացիները կարողանում համընդհանուր փոխհամաձայնեցված մոտեցումներ կիրառել երկրի պաշտպանական անվտանգության ապահովման, ներառյալ բանակաշինության

¹ Իսրայելի զինված ուժերը միջազգայնորեն հայտնի է նաև «ՑԱՀԱԼ» անվանումով, որը եբրայերենից թարգմանաբար նշանակում է Իսրայելի պաշտպանության բանակ:

զարգացման, երկրի պաշտպանական համակարգի կառավարման հարցերում:

«Անհատ-զինվորական» մոդելը ենթադրում է նաև հետևյալ հիմնական գործառույթները.

- ձևավորել զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական հսկողության ինստիտուտ, ինչն իր հերթին առանցքային նշանակություն ունի զինված ուժերի մարտունակության բարձրացման համար,
- կազմակերպել *հասարակությունում զինված ուժերի ինտեգրման* գործընթացը, մշակել հասարակություն-զինված ուժեր *բաց* և *ազատ* համագործակցության արդյունավետ մեխանիզմներ: Ընդ որում, *Իսրայելի և համասփյուռ հրեության համար բանակն առհասարակ համարվում է հայրենի երկրի կարևորագույն՝ նաև սոցիալական ինստիտուտներից մեկը,*
- *յուրաքանչյուր հրեա, հայրենաբնակ կամ ոչ, անկախ նրանից՝ ծառայել է ԻՊԸ-ում, թե ոչ, անկախ սեռից, տարիքից ու քաղաքացիությունից, պետք է իր մասնակցությունն ունենա զինված ուժերի մարտունակության բարձրացման, պաշտպանական համակարգի գործունեության կատարելագործման և ըստ այնմ՝ հայրենիքի պաշտպանության գործին: Հրեության համար սա մի գործընթաց է, որով ազգը դառնում է բանակ,*
- «անհատ-զինվորական» մոդելը, լայն հնարավորություններ ստեղծելով զինված ուժերի զարգացման գործում *հասարակության անմիջական ներգրավվածության համար, միաժամանակ ձևավորում է հասարակու-*

թյուն-զինված ուժերի միջև կոնսենսուս, որի հիման վրա արդյունավետ պայքար է տարվում զինված ուժերում առկա արատավոր երևույթների դեմ:

Իսրայելում ընդունված է ասել՝ «Իսրայելի պաշտպանության բանակը համայն հրեա ժողովուրդն է», և որ «Իսրայել պետության յուրաքանչյուր քաղաքացի տարվա մեջ 11 ամիս արձակուրդում գտնվող զինվորական է»:

Եվ հրեության, երկրի իշխանության ու հատկապես ԻՊԲ-ի ու նաև հոգևորականության խորին համոզմամբ (ինչպես նաև տարբեր միջազգային ռազմական փորձագիտական գնահատականներով)՝ Իսրայելի պաշտպանության բանակը աշխարհի ամենամարտունակ զինված ուժերից մեկն է: Վարկանիշ, որը մեծապես ձեռք է բերվել զինվորականության հենց հոգևոր-բարոյական արժեքների պահպանման, զարգացման և լայն կիրառման արդյունքում:

Վերոնշյալ առումով և հատկապես հրեության հոգեմտավոր ու գաղափարական համընդհանուր ընկալմամբ, դասալքությունը, ԻՊԲ-ում զինծառայությունից խուսափելը համարվում են թե՛ մեղք, թե՛ հանցագործություն:

1. ՊԵՏԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԵԿՏ

Իսրայելի պետական ապարատի ղեկավարներից շատերը եղել են Իսրայելի պաշտպանության բանակի բարձրաստիճան հրամանատարներ: Պաշտպանական համակարգի ներկայացուցիչների՝ երկրի բարձր քաղաքական պաշտոնների ստանձնման իրողությունն առաջին հայացքից ենթադրում է, որ երկիրը կարող է գնալ ռազմականացման ճանապարհով, սակայն Իսրայելի դեպքում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական հսկողության և զինված ուժերի զարգացման գործում հասարակության ներգրավվածության հարցերը կանոնակարգված են և գործում են բավական արդյունավետ: Քանի որ երկիրը զարգանում է հակառակորդների մշտական պատերազմի սպառնալիքների ներքո, *բարձրաստիճան զինվորականների ներկայացվածությունը երկրի քաղաքական վերնախավում դրական ազդեցություն է ունենում Իսրայելի պաշտպանական-անվտանգային հարցերում քաղաքական որոշումների կայացման գործընթացի վրա:*

Որպես կանոն, երկրի քաղաքական վերնախավի բարձրաստիճան պաշտոնյաներից շատերն իրենց զինվորական ուղին անցել են մասնավորապես ԻՊԲ այսպես կոչված էլիտար (հատուկ նշանակության, մարտական) զորամասերում (Իսրայելում «էլիտար ստորաբաժանումներ» ասելով նկատի են առն-

վում այն գորատեսակները, որոնք իրականացնում են արտակարգ կարևորության և բարձր պատասխանատվություն պահանջող մարտական գործողություններ և խնդիրներ. էլիտար զորքեր են համարվում նաև Իսրայելի ռազմաօդային ուժերը):
Էլիտար զորամասերում զինծառայությունը Իսրայելում և հրեության շրջանում ընկալվում է որպես յուրաքանչյուր հրեայի համար հնարավորություն իր հայրենասիրությունն ու նվիրվածությունն արտահայտելու հայրենիքի և համայն հրեության նկատմամբ՝ անհրաժեշտության դեպքում պատրաստակամ լինելով զոհաբերելու անգամ սեփական կյանքը: Իսրայելական բանակի էլիտար զորամասերի մեջ առանձնանում է 1957թ. ստեղծված և ԻՊԲ Գլխավոր շտաբի հետախուզության վարչության ենթակայության տակ գործող «Սայերերթ Մատքալ» հատուկ նշանակության զորամասը, որը մարտական խնդիրներ կատարելու իրավունք ունի նաև Իսրայելի սահմաններից դուրս: Այս զորամասում ծառայածներից շատերը հետագայում դարձել են բարձրաստիճան պաշտոնյաներ, քաղաքական-ռազմական գործիչներ: Չորամասում ծառայողների մեջ մեծ է նաև հայրենադարձ հրեաների և կանանց թիվը: Նշանավոր հրամանատարներից է եղել փոխգնդապետ Յոնաթան Նեթանյահուն՝ Իսրայելի գործող վարչապետ Բենիամին Նեթանյահուի ավագ եղբայրը, որը զոհվել է 1976թ. իր անմիջական հրամանատարության ներքո, երկրից դուրս իրականացվող՝ պատանդների ազատ արձակման մի գործողության ժամանակ: Նշանավոր հրամանատարներից են Իսրայելի նախկին վարչապետ Էհուդ Բարաքը (1999-2001թթ.), «ՑԱՀԱԼ»-ի Գլխավոր շտաբի պետ Մոշե Յաալոնը (2002-2005թթ.) և այլք:

Ընդհանրապես, Իսրայելի զինված ուժերում և հատկապես նրա էլիտար զորամասերում զինծառայությունը կարևոր ցատկատախտակ է երկրի քաղաքական-իշխանական վերնախավում ներկայացված լինելու համար¹: Ուստի Իսրայել պետության բարձրաստիճան պաշտոնյաներից շատերը, լինելով ԻՊԲ զեներալներ և նախկին բարձրաստիճան սպաներ, նաև այդ շահագրգռությամբ են ձգտում, որպեսզի իրենց զավակները շարունակեն ընտանեկան-սպայական ավանդույթները՝ որպես երկրի իշխանությունում բարձրաստիճան դիրքերի հասնելու և պահպանելու կարևոր երաշխիքներից մեկը: Այդուհանդերձ, հատկանշական է, որ Իսրայելում չկան այսպես կոչված «սպայական դինաստիաներ»։ ԻՊԲ բարձրաստիճան սպա դառնալու հավասար հնարավորություններ ունեն ինչպես զեներալների, այնպես էլ երկրի շարքային քաղաքացիների զավակները: Սակայն ԻՊԲ-ում գործում է սերնդեսերունդ զինված ուժերի մարտական հատուկ կամ էլիտար զորամասերում զինծառայությունը փոխանցելու սպայական ավանդույթը: Օրինակները քիչ չեն. զինվորական պարտքը կատարելիս տարբեր տարիներին զոհվել են ԻՊԲ Գլխավոր շտաբի պետ, զեներալ Ռաֆայել Էյթանի որդին՝ Յորամ Էյթանը (զինվորական կոչումը՝ մայոր), ԻՊԲ Ռազմաօդային ուժերի գլխավոր հրամանատար, զեներալ Դավիթ Իվրիի որդին՝ Գիլ Իվրին (զինվորական կոչումը՝ կապիտան), Իսրայելի նախկին վարչապետ Մենախեմ Բեզինի թոռը՝ Յոնաթան Բեզինը (զինվորական կոչումը՝ կապիտան) և այլք²:

¹ <http://www.refsr.com/referat-6205-1.html>

² <http://spetsialny.livejournal.com/1788630.html>

Իսրայել պետության հատկանշական երևույթներից է նաև այն, որ ԻՊԲ գեներալները մշտապես գտնվում են հասարակության, կառավարության և լրատվամիջոցների խիստ ուշադրության կենտրոնում, և գեներալների կողմից իրավական կամ բարոյական նորմերի խախտման ցանկացած դեպք անմիջապես ենթարկվում է հետաքննության, իրավական դատապարտման: Քիչ չեն եղել ԻՊԲ բարձրաստիճան սպաների մասնակցությամբ աղմկահարույց դեպքերը, որոնց մի մասն ավարտվել է վերջիններիս ձերբակալություններով և դատապարտմամբ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԱՍՊԵԿՏԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԻՆՎԱԾՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

ԻՊԲ-ն նաև յուրօրինակ կրթօջախ է և հանդիսանում է երկրի կրթության ու դաստիարակության զարգացման առաջատար հաստատություններից մեկը: ԻՊԲ-ն զինվորների համար արդյունավետ ցատկատախտակ է մասնագիտացման ու ընդհանուր կրթության բարձրացման առումով: Իսրայելում բնակչության գիտակրթական ընդհանուր բարձր մակարդակը հնարավորություն է տալիս երիտասարդությանը՝ մասնագիտական հմտություններն ու գիտելիքներն առավելագույնս ներդնել զինված ուժերի զարգացման գործում և զինծառայության ընթացքում ապահովել հնարավորինս բարձր կրթական-մասնագիտական արդյունավետություն, զինծառայության ընթացքում ձեռք բերած մասնագիտական փորձը **հետադարձ մեխանիզմով** կիրառել հասարակությունում:

Փորձը ցույց է տալիս, որ ԻՊԲ-ում շարային դասաժամերի փոխարինումը կրթական-գիտական ծրագրերով նպաստում է զինվորների առօրյայում ուսումնական բաղադրիչի հազեցածությանը, ինչն իր հերթին դրականորեն է անդրադառնում թիմային աշխատանքի վրա: Շարային ժամերի աստիճանական սահմանափակումը և դրանց փոխարինումը

կրթական-մտավոր դասընթացներով միաժամանակ կարևոր նշանակություն են ունեցել զինծառայողների նեղ զինվորական մասնագիտացման խորացման տեսանկյունից: Նույն Իսրայելի կամ Շվեյցարիայի բանակում շարային ծրագիրը հանված է՝ համարվելով զինծառայության կազմակերպման ո՛չ արդյունավետ մեթոդ և ժամանակի անիմաստ կորուստ: ԻՊԲ-ում ընդունված է *«ԻՊԲ-ն պատերազմի՝ համար նախատեսված բանակ է, այլ ո՛չ թե զորահանդեսների»* կարգախոսը:

ԻՊԲ-ն օգտագործում է զինակոչիկի մասնագիտական հմտությունները, սակայն առաջնահերթություն է տալիս զինված ուժերի հատուկ մասնագիտական ուղղություններին և այդ պահանջների բավարարմանը:

Էլիտար (հատուկ նշանակության, մարտական) զորամասեր են ուղարկվում հիմնականում այն զինակոչիկները, որոնք կամավոր նման զորամասում ծառայելու ցանկություն են հայտնել: Էլիտար զորամասերում նորակոչիկների ընտրության գործընթացը մեկնարկում է նրանց դպրոցական հասակում, երբեմն՝ զորակոչային ժամկետից 2-3 տարի առաջ:

ԻՊԲ հատուկ նշանակության զորքերում զինծառայության անցնելու համար անհրաժեշտ է հանձնել քննություն, որը հայտնի է «Գիբուշ» անվանումով: Էլիտար զորքերում զինծառայության անցման նպատակով մեկ թափուր տեղի համար ներկայացվում են ընդհուպ մինչև մի քանի հարյուր թեկնածություններ: Այս զորամասերում զինծառայություն անցնելու համար պահանջվում է հանձնել ֆիզիկական պատրաստվածության և հատուկ հոգեչափական թեստեր: Քննության անցկացման նպատակն է պարզել.

- *զինակոչիկը որքանով է կարողանում հաղթահարել իր առջև դրված ֆիզիկական, հոգեբանական «ծայրահեղ» կամ «արտակարգ» իրավիճակները,*
- *ինչպես է իրեն դրսևորում թիմային աշխատանքում:*

Քննությունը բաղկացած է նաև այլ թեստերից, որոնց նպատակն է պարզել.

- *զինակոչիկի առաջնորդ լինելու առանձնահատկություններն ու հմտությունները,*
- *նրա մոտիվացիան՝ ժամկետային զինծառայությունից հետո պայմանագրային-սպայական զինծառայության անցնելու հնարավորության վերաբերյալ:*

«Գիբուշ» քննությունը սովորաբար տևում է 1-7 օր՝ կախված հատուկ նշանակության գորամասի մասնագիտական ուղղվածությունից և տեսակից: Բացի այդ, քննության ընթացքում անցկացվում է սոցիոչափական թեստ, որի նպատակն է պարզել՝ արդյո՞ք թիմի անդամները ցանկություն կհայտնեն անցնել զինծառայությունը տվյալ զինակոչիկի հետ, թե՞ ոչ: «Գիբուշ» քննության ավարտին, որպես կանոն, քննությանը մասնակից յուրաքանչյուր զինակոչիկ լրացնում է հատուկ սոցիոչափական հարցաթերթիկ, որտեղ նա գնահատում է քննության այլ մասնակիցներին: Հարկ է նշել նաև, որ ԻՊԲ հատուկ նշանակության զորքերում գործում է այսպես կոչված «ռովայի» բալային համակարգը կամ զինվորականի մարտական պատրաստվածության համաթիվը (ինդեքսավորում), որի համաձայն՝ էլիտար գորամասի յուրաքանչյուր

զինվորական ստանում է ցամաքային մարտական գործողությունների վարման պատրաստվածության աստիճան (օրինակ՝ զինճառայողների մեծամասնությունը կրում է 2-րդ աստիճան, որը ոչ մարտական աստիճանակարգ է):

Ռազմական հրահանգիչները գնահատում են զինակոչիկի հոգեվիճակը և ֆիզիկական պատրաստվածության մակարդակը՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

- *Կամքի ուժ*
- *Հուսալիություն, վստահություն (առաջադրանքների կատարման վերաբերյալ անձնական հաշվետվության հանձնման հարցում ազնվություն ունենալու հատկանիշը)*
- *Հանձնարարության ընթացքում զինակոչիկի կողմից առավելագույն հոգեկան-ֆիզիկական կարողությունների ներդրման ունակություն*
- *Հանձնարարության ընթացքում փոխօգնություն ցուցաբերելու պատրաստականություն*
- *Զինակոչիկի պատասխանատվության կրման ընկալում և դրսևորում*
- *Մտոնասրտության դրսևորում և այլն¹:*

Եթե ԻՊԲ-ն նպատակահարմար է համարում զինակոչիկի ստացած քաղաքացիական մասնագիտությունը շարունակել զինճառայության ընթացքում, ապա ամեն կերպ խրախուսում է զինակոչիկին ժամկետային զինճառայությունից հետո համալրելու զինված ուժերի մշտական կազմը:

¹ <http://www.milnavigator.com/kak-pravilno-podbirat-i-ispolzovat-lichnyj-sostav-boevoj-opyt-izrailya/>

Զինակոչիկի քաղաքացիական մասնագիտությունից, մասնագիտական առկա պոտենցիալից և գիտելիքներից, ինչպես նաև երբայերենի իմացության մակարդակից է զգալիորեն կախված, թե ինչ զորքեր կուղարկվի ծառայության ու այդ ընթացքում ինչ զինվորական պաշտոններ կստանան՝ կամ առհասարակ կստանան՝, թե՞ ոչ:

ԻՊԲ-ում գործում են երիտասարդական գումարտակ-ակումբներ, որտեղ անչափահաս պատանիները և աղջիկները (հիմնականում 12-18 տարեկան) մինչև զորակոչային տարիքը հնարավորություն են ստանում ընդհանուր կրթականի հետ անցնելու ռազմական պատրաստություն՝ ցամաքային, ռազմաօդային և այլ զորատեսակներում ծառայելու համար: Այդպիսով ստացվում է կրթաուսումնական հարթակ, որտեղ ամրապնդվում և զարգանում են դպրոց-զինված ուժեր ինստիտուցիոնալ հարաբերությունները: Այս դպրոց-բանակ ձևաչափը թույլ է տալիս պատանիներին և աղջիկներին, մինչև զորակոչային տարիքը ծանոթանալով զինվորական տեսական և գործնական-դաշտային գիտելիքներին, առավել հեշտ ինտեգրվել ԻՊԲ ժամկետային՝ պարտադիր զինծառայությանը: Երիտասարդական նման կազմակերպություն-ակումբներից առանձնանում է Իսրայելի «Գադնա» երիտասարդական, կամավորական կազմակերպությունը (Եբրայերենից թարգմանաբար՝ «Երիտասարդական ջոկատներ»), որը մասնագիտացած է Իսրայելից բացի նաև արտերկրի հրեական համայնքներից 13-18 տարեկան անչափահասներին ԻՊԲ-ում զինծառայության նախապատրաստման համար: Կազմակերպությունն անմիջականորեն ղեկավարվում է բանակի հրամանա-

տարության կողմից, որը կոորդինացնում է աշխատանքները Իսրայելի կրթության, մշակույթի, սպորտի և այլ նախարարությունների, պետական գործակալությունների, ինչպես նաև տարբեր հասարակական կազմակերպությունների հետ: «Գադնա» կազմակերպության գործունեությունը կենտրոնացած է դպրոցներում, երիտասարդական կառույցներում: «Գադնա»-ի ճանաչողական-նախապատրաստական դասընթացները ներառում են ֆիզիկական պատրաստվածությունը, տարբեր զենքերի գործածությունը, հետախուզության վարման կանոններին, հմտություններին տիրապետելը՝ նաև դաշտային գորավարժությունների միջոցով:

Կազմակերպությունում հատուկ նշանակություն է տրվում մասնակիցների միջև ընկերասիրության, փոխվստահության, փոխօգնության դաստիարակությանը: Հատկանշական է, որ կազմակերպության ճամբարային ուսուցման գործընթացը համատեղվում է հարակից բնակավայրերում իրականացվող գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցությամբ: Երկրում արտակարգ դրության հայտարարման դեպքում «Գադնա» կազմակերպության ջոկատները Իսրայելի զինված ուժերի Գլխավոր շտաբի պետի կարգադրությամբ կարող են բերվել մարտական պատրաստվածության:

Մինչև գորակոչային տարիքը անչափահասների շրջանում զինվորական պատրաստվածության գործում զգալի է նաև մեկ այլ իսրայելական երիտասարդական կազմակերպության՝ «Յոֆիմ»-ի ավանդը: Այն հիմադրվել է 1919թ. Թել Ավիվում և Հայֆայում, երբ Իսրայել պետության գոյության հեռանկարը շատ քչերին էր ընկալելի, ցանկալի ու իրագոր-

ծելի: Այդ քաղաքների և հիմնականում հրեական սփյուռքի անչափահաս տարիքի պատանիները և աղջիկները քաղաքացիական դաստիարակչական, հասարակական-կամավորական գործունեությանը զուգահեռ՝ մարզվում, պատրաստվում էին նաև զինվորական ոչ ստանդարտ գործողությունների համար: Եվ դա շարունակվում է նաև մինչև այժմ՝ ԻՊԲ ծառայության պայմաններին համապատասխան:

ԻՊԲ զորամասերի ուսումնական ծրագրերը ներառում են նաև սիմուլյացիոն (իմիտացիոն) ռազմահոգեբանական խաղեր: Այդ իմիտացիոն խաղերը կազմակերպվում են թիրախային և «թիմային» առավել արդյունավետ որոշումների կայացման նպատակով, որը ենթադրում է թիմի ***ոչ գծային*** (ոչ ստանդարտ) որոշակի աշխատանք, գործողություններ պայմանական միջավայրում և հանգամանքներում: Այդ խաղերի մեթոդաբանության առանձնահատկությունը ենթադրում է թիմի աշխատանքի այնպիսի արդյունավետություն, որն անհնարին կամ դժվար իրականանալի է այլ ուսուցման գծային մեթոդների կիրառման պարագայում: Իմիտացիոն խաղը հնարավորություն է ընձեռում.

- էապես բարձրացնել մասնակիցների ներգրավվածության մոտիվացիան,
- կտրվել անէական, ապակողմնորոշող հարցերից՝ առավել ուշադրություն կենտրոնացնելով տվյալ խնդրի անմիջական կատարման նկատմամբ,
- մշակել և ընդունել ոչ գծային, ոչ լրիվ պարզ, իսկ որոշ դեպքերում՝ անլուծելի թվացող որոշումներ¹:

¹ <http://www.fiteducation.ru/fivoqs-61-1.html>

Վերոնշյալ իմիտացիոն խաղերում մեծ տարածում ունեն այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են.

- թատերական ռազմախաղեր՝ տարբեր կերպարների, տարբեր պայմաններում փոխգործակցության հետ կապված հարցերի բացահայտման համար,
- կոնֆլիկտային իրավիճակների արհեստական ստեղծում՝ մասնակիցների զգացմունքների և իռացիոնալ վերաբերմունքի պատճառների բացահայտման նպատակով,
- այլ ռազմախաղեր՝ որոշակի հանգամանքներում լավագույն տարբերակներով որոշումների ընդունման համար:

Այդ իմիտացիոն ռազմախաղերի առումով ԻՊԲ-ում ծառայած զինվորականներից մեկը նշում է «սուզանավ» խաղը, որի 12 հոգուց բաղկացած անձնակազմի թթվածնի չափաբաժինը բավարարում է միայն նրանցից երեքին: Այս դեպքում թիմը որոշակի ժամանակամիջոցում պետք է ճիշտ որոշում կայացնի, թե ովքեր պետք է լինեն այդ երեքը: Կլարոդանա՝ արդյոք թիմը տվյալ ժամանակամիջոցում, առանց հակամարտության, գալ ընդհանուր համաձայնության, փոխզիջման. կողմերը պետք է համոզեն միմյանց, պնդեն իրենց կարծիքը և գան ընդհանուր հայտարարի, այդ ընթացքում ***հոգեբանները հետևում են նրանց գործողություններին, տալիս գնահատականներ:***

Իսրայելի ռազմական փորձագետները հատուկ նշում են այն հանգամանքը, որ երկիրը, գտնվելով մշտական ռազմական սպառնալիքների ներքո և հնարավոր պատերազմների

մեջ, դեռևս վաղ տարիքից պատանիներին և աղջիկներին հոգեբանորեն ու ֆիզիկապես, իսկ երիտասարդ տարիքում՝ արդեն նաև գաղափարապես, ֆիզիկապես նախապատրաստում են **հրեա զինվորականության վարքականոնի ոգով, զինվորական ավանդույթներով**, ինչը նպաստում է զինձառայության շեմին երիտասարդների ազգային ինքնագիտակցության, զինձառայողի մարտունակության բարձրացմանը՝ **հոգևոր առաքելության** գիտակցումով:

Ծառայության ավարտից հետո անցնելով պահեստագործ՝ զինվորականներն ԻՊԲ-ից ստանում են դրամական «նվեր», որը հատուկ նախատեսված է նրա բուհական (քաղաքացիական) կրթության համար: Սա հավելյալ **մոտիվացիա է** զինվորների բարոյական կերպարի լավացման համար, քանի որ վատ ծառայության ու առաջադիմության ցածր արդյունքների դեպքում զինվորը զրկվում է այդ դրամական հնարավորությունից:

ԻՊԲ կազմակերպական-հոգեբանական գործառնություններից է նաև այն, որ, ինչպես տեղեկացվում է, **«3 ամիսը մեկ անգամ տվյալ զինվորական գորամասը փոխում է զինձառայության բնակավայրը, միջավայրը, որպեսզի զինվորներն ունենան նոր զգացողություններ, որը կօգնի բարձր պահել զգոնությունը»**: Սա միաժամանակ հնարավորություն է տալիս զինձառայողներին զարգացնելու տարբեր բնակլիմայական միջավայրերում իրենց աղապտացման ունակությունները և նոր միջավայրում կիրառել ու կատարելագործել նախկինում ձեռք բերած զինվորական-մասնագիտական կարողությունները, հմտությունները:

Իսրայելում զինակոչիկն անցնում է մի քանի բազային թեստեր, որոնք հնարավորություն են տալիս ԻՊԲ հրամանատարական համապատասխան անձնակազմին երկրի զինված ուժերի տարբեր գորամասերում զինակոչիկների տեղաբաշխման հարցում մասնագիտական տեսանկյունից ճիշտ կողմնորոշվել և կայացնել արդյունավետ որոշումներ՝ ելնելով զինակոչիկի անձնական այնպիսի տվյալներից, ինչպիսիք են՝ քաղաքացիական կրթության մակարդակը և մասնագիտացման ուղղությունը, հոգևոր-հոգեբանական, առողջական-ֆիզիկական պատրաստվածությունը և այլն: Այդ բազային թեստերը ներառում են.

1. եբրայերենի իմացություն՝ հատկապես հայրենադարձված հրեաների համար;
2. **հոգեչափական թեստ-հարցազրույց**, որի բովանդակությունը բավական հակիրճ է ձևակերպված: Հոգեչափական թեստը գնահատում է զինակոչիկի հոգեբանական ընդհանուր վիճակը, պարզում նրա մեջ հնարավոր հոգեբանական խնդիրների ու բարդույթների առկայությունը, ըստ այդմ էլ որոշում է կայացվում զինակոչիկի հետագա զինծառայության մասնագիտացման հարցում: Հոգեչափական թեստը գնահատում է նաև զինակոչիկի մոտիվացիան, ինչպես նաև թիմային աշխատանքին նրա մասնակցության արդյունավետությանն առնչվող հարցերն ու առանձնահատկությունները: Հոգեչափական թեստը, որպես կանոն, վարում են կանայք, որոնք մասնակցել են 4-ամսյա հատուկ դասընթացների և ունեն համապատասխան մասնագիտական փորձառություն;

3. գորակոչիկների դպրոցական կրթության գնահատում՝ որոշելու համար նրա ծառայության վայրը;
4. բժշկական թեստ՝ որոշելու զինակոչիկի առողջական վիճակը, ֆիզիկական պատրաստվածության մակարդակը:

ԻՊԲ սպաներն իրենց ծառայության ընթացքում, բացի ռազմաուսումնական հաստատություններում հետագա կրթությունը շարունակելուց, հնարավորություն ունեն սովորելու Իսրայելի և արտերկրի քաղաքացիական բուհերում: Այս նպատակով սպաներին տրամադրվում է մինչև 3 տարի ժամկետով վճարովի արձակուրդ՝ այդպիսի բուհում ուսուցման և գիտական աստիճան ստանալու նպատակով: Այդ ուսուցումը կարող է լինել նաև հեռակա¹: Որևէ բնագավառի գիտական աստիճանի առկայությունը, սկսած փոխգնդապետի կոչումից, պարտադիր պայման է առաջխաղացման համար:

¹ <http://spetsialny.livejournal.com/1788630.html>

3. ՄՈՎԱԵՍԱԿԱՆ-ՀՐԵՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԻՊԲ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Իսրայելում պետությունը և հասարակությունն ընդհանրապես շատ բարձր են *արժևորում զինվորականությանը՝* լինի շարքային, թե բարձրաստիճան սպա: Այդ հասկացողությամբ *զինվորը հասարակությունում բարձրագույն արժեք է:* Դրանից է բխում նաև Իսրայելում և համայն հրեությունում առհասարակ հրեա ռազմագերու նկատմամբ բարձրագույն հոգածության հանգամանքը: Բազմաթիվ են օրինակները, երբ Իսրայելի ղեկավարությունը 1 հրեա ռազմագերու փոխարեն պատրաստակամություն է հայտնում փոխանակել 1000 և ավելի գերի: Հրեա ռազմագերու նման բարձր արժևորումն ունի կրոնաբարոյական հիմնավորումներ, որն ամրագրված է Մովսեսական օրենքում: Դրանով տիրում է այն հասկացողությունը, որ *«ռազմագերին օգնության ավելի շատ կարիք ունի, քան աղքատը կամ հիվանդը»:* Պետության և հասարակության կողմից շարքային զինվորի բարձր արժևորումն, ըստ երևույթին, պայմանավորված է նրանով, որ Իսրայելի յուրաքանչյուր քաղաքացի իր ու իր ընտանիքի, *մերձավորների, հարազատների անվտանգության ապահովման երաշխիքը տեսնում է զինվորի համապատասխան զարգացման մակարդակի և նվիրումի մեջ:*

Չհինձառայությանը հոգեբանորեն պատրաստվում են ոչ միայն զինձառայողները, այլ նաև նրանց ծնողները: ԻՊԲ-ն իրականացնում է հատուկ կանոնավոր հանդիպումներ զինձառայողների ծնողների հետ, որտեղ նրանք ստանում են համապատասխան տեղեկատվություն ձառայության տարբեր հարցերի շուրջ: Անցկացվում են նաև սեմինարներ, քննարկումներ այն զինվորների ծնողների հետ, որոնք նոր են հայրենադարձվել հայրենիք: Կազմակերպվում են ծնողների այցելություններ՝ գորամասեր՝ տեղում պայմաններին ծանոթանալու և ***առհասարակ ընտանիք-բանակ փոխգործակցության ձևաչափն ամրապնդելու նպատակով:***

Իսրայել պետության ղեկավարությունը, քաղաքական շրջանակները և, մասնավորապես, ԻՊԲ հրամանատարությունը էապես կարևորում են իսրայելական բանակի միջազգային հեղինակության և տեղեկատվական պայքարի ու անվտանգության հարցերը: Իսրայելում և միջազգային շրջանակներում ԻՊԲ ռազմական հեղինակության, իմիջի (brand) բարձրացման նպատակով ԻՊԲ ենթակայության ներքո գործում է մամլո խոսնակի բաժինը (եբր.՝ «Դովեր ՅԱՀԱԼ»)¹: Մամլո խոսնակի բաժնի զինձառայողները, համագործակցելով իսրայելական և միջազգային ՁԼՄ-ների հետ, լուսաբանում են Իսրայելի պաշտպանության բանակի գործողություններն ու տարածաշրջանային իրադարձությունները, միաժամանակ տեղեկատվական-քարոզչական ակտիվ գործունեություն իրականացնում սոցիալական ցանցերում²: Ի

¹ <http://beinIsrael.com/social/ourlife/armiya-izrailya-chast-1-tramplin-dlya-karery/>

² <https://kasda.co.il/en/press-attashe-dover-tsahal/>

դեպ, մամլո խոսնակի բաժնում զինակոչիկների ընդգրկման համար պայման է նրանց մասնակցությունը երկամսյա մասնագիտական դասընթացներին: Որպես կանոն, մամլո խոսնակի բաժնի շարքերում ընդգրկվելու ընտրությունն անց է կացվում մինչ գորակոչային տարիքը՝ նաև «Տեղեկատվություն և մեդիա» անվանումը կրող հայտնի զինվորական սեմինարներին մասնակից պատանիների ու աղջիկների շրջանում: Այդ բաժնում ընդգրկված զինվորականներից շատերը շարունակում են համագործակցել իրենց հրամանատարության հետ նույնիսկ գորացրվելուց հետո:

ԻՊԲ-ն տեղեկատվությամբ ներկայացնում է բանակի ծառայությունն ավարտած զինվորականների հարցազրույցները և իրենց ծառայության տպավորությունները: Մա դրականորեն է անդրադառնում զինված ուժերի հեղինակության վրա և խթան է հանդիսանում հատկապես արտերկրի հրեության համար՝ ավելի ակտիվ մասնակցելու զինծառայությանը երկրի զինված ուժերում:

Իսրայելում և համայն հրեությունում առանձնակի ուշադրության թեմա է հրեական հոգևորական-ուղղափառ ընտանիքներից սերող երիտասարդների զինծառայության հարցը: Իսրայելական օրենսդրության համաձայն, մովսեսական հոգևոր սեմինարիաներում ուսումնառությունը չի ազատում վերջիններիս ուսանողությանը ԻՊԲ-ում ժամկետային պարտադիր զինծառայությունից: Մակայն դրանց ուսանողներին իրավունք է տրվում փաստորեն չծառայել տարեկետման շարունակ հետաձգման միջոցով¹:

¹ <https://www.youtube.com/watch?v=TY4N7wMN4mc>

Այս իրավիճակը փոխվեց միայն այն ժամանակ, երբ ԻՊԲ-ում ստեղծվեց հատկապես կրոնավոր-պահպանողական, ուղղափառ հրեաների համար նախատեսված զինվորական հատուկ նշանակության զորամաս՝ «կրոնական հատուկ նշանակության զորքեր» անվանումով¹, որը բազմիցս մասնակցել է մարտական գործողությունների: Ջորամասի զինվորական առօրյայում զինճառայությունն իրականացվում է կրոնական-ուղղափառ կանոնների խիստ պահպանմամբ: Այդպիսի զորամասում ծառայում են միայն արական սեռի ներկայացուցիչները²:

Հատկանշական է այն հանգամանքը, որ կրոնական-պահպանողական (ուղղափառ) ընտանիքների կողմից ուսման պատճառաբանությամբ զինճառայությունից շարունակական տարեկետման իրավունքից օգտվելով չճառայելը հասարակությունում ընկալվում է որպես զինճառայությունից խուսափելու միջոց, դատապարտելի երևույթ: Հետևապես կրոնական զորամասում զինճառայությունը լավ հնարավորություն է՝ վերափոխելու Իսրայելի հասարակությունում ուղղափառ-պահպանողական հրեաների նկատմամբ ձևավորված բացասական ընկալումները:

Կարգապահությունն առաջնակարգ նշանակություն ունի ԻՊԲ զինճառայությունում և միջանձնային հարաբերություններում: Զինճառայողների միջև ոչ կանոնադրային հարաբերությունները և դրսևորումները խստորեն դատապարտվում են բարձրագույն հրամանատարության կողմից, բացահայտված դեպքերը հանգեցնում են անմիջական պա-

¹ https://www.youtube.com/watch?v=2pGbBHhHO_k

² Նույն տեղում:

տասխանատու սպաների՝ զինված ուժերից հեռացմանը, դատական գործերի հարուցմանն ու ընդհուպ մինչև տվյալ զինվորական զորամասի լուծարմանը¹: ԻՊԲ-ում ընդունված է ասել, որ «արտաքին թշնամիներին հակազդող բանակը պետք է լինի կարգապահորեն համախմբված»: ԻՊԲ-ում առկա կարգապահության բարձր մակարդակի և գործող կանոնադրային հարաբերությունների խիստ պահպանման շնորհիվ զինվոր-զինվոր և զինվոր-հրամանատար փոխհարաբերությունները ջերմ են, ընկերական-թիմային և աշխատանքային: Այդ առումով, ԻՊԲ-ում հաճախ են նշում, որ «խսրայելյական բանակը կարևոր նշանակություն և դեր ունի անհատի ձևավորման ու կայացման գործում»:

Խսրայել պետության ռազմաքաղաքական ղեկավարությունն էսպես կարևորում է նաև ԻՊԲ զինծառայությանը կանանց և աղջիկների ներգրավման հարցը: ԻՊԲ-ում զինծառայությունը կանանց հնարավորություն է տալիս տղամարդկանց հետ հավասարապես կիսել քաղաքացիական թե՛ պարտականությունները, թե՛ իրավունքները: Բացի այդ, կանանց զինծառայությունը դիտվում է որպես հակառակորդի զինված ուժերի հետ անձնակազմի անբարենպաստ քանակական հարաբերակցությունը որոշակիորեն լավացնելու հնարավորություն: Զինված ուժերը կանանցով համալրելու գործընթացի սկզբնական փուլում ԻՊԲ հրամանատարությունը մտավախություն ուներ, որ արական սեռի ներկայացուցիչների հետ կանանց համատեղ զինծառայության պարագայում կարող են առաջանալ սեռական բնույթի խնդիրներ (ներառյալ՝ ֆիզիկա-

¹ <https://www.youtube.com/watch?v=TY4N7wMN4mc&t=766s>

կան բռնությունները և այլն), որոնք կարող էին բացասաբար ազդել հասկապես զինված ուժերի մարտունակության վրա: Այդ իսկ պատճառով սկզբնական փուլում բավական խիստ էր դրված վերահսկողությունը տարբեր սեռերի զինձառայողների միջև սիրային կապերի, նույնիսկ ամուսնությունների դեպքերի նկատմամբ: Հետագա տարիները, սակայն, ցույց տվեցին լրիվ հակառակ միտումը, ասել է թե՛ զինձառայողների միջև սիրային կապերը, առավելևս՝ ամուսնությունները գլխավորապես դրականորեն են անդրադառնում թե՛ զինվորականների հետագա ծառայության, թե՛ առհասարակ զինված ուժերում կարգապահության պահպանման վրա: Ներկայում ԻՊԲ-ում զինձառայողների միջև ամուսնությունները դարձել են սովորական և բավական ընդունելի երևույթ:

Իսրայելը միջազգայնորեն համարվում է բացառիկ երկիր, որի զինվորներն արձակուրդի ընթացքում, որպես կանոն, իրենց հետ ունենում են իրենց ամրակցված հրազենային զենքը: Երկրի տարբեր քաղաքներում, բնակավայրերում սովորական երևույթ է տեսնել փողոցներում առօրյայի, անցուդարձի մասը կազմող, զենքն ուսին զինվորների: Այդ երևույթի պատճառով, որպես կանոն, միջադեպերի բացակայությունը պայմանավորված է նախևառաջ Մովսեսական-հրեության ու ըստ այնմ՝ նաև զինվորականության հոգևոր-բարոյական արժեհամակարգով, որը համարվում է հոգու պահպանման պայման: Այդպիսով, «զենքի գործածությամբ կարելի է սպանություն գործել՝ միմիայն սեփական կյանքը, մերձավորների կյանքը և ժողովրդի կյանքը պաշտպանելու համար»¹:

¹ Израиль: солдаты Ветхого Завета, https://www.youtube.com/watch?v=2pGbBHhHO_k&t=367s

Մեր ձավորարկության մշակույթում տղամարդու և զենքի ֆիզիկական շփումը կարևոր գործոն է երիտասարդի հասունացման գործում (այլ կերպ հայտնի է որպես «հասունացման նախաշեն» սահմանմամբ): Ինչպես նկատում է հրեա զինվորականներից մեկը, «զենքը մշտապես քեզ հետ պետք է լինի՝ ուտելիս, քնելիս, լողանալիս... Երբ զինվորն առանց զենքի է մնում, նրանից սկսում է մի կարևոր բան պակասել»:

Իսրայել պետության ղեկավարությունը բանակ-հասարակություն հարաբերություններում առաջնակարգ նշանակություն է տալիս փոխվստահության մթնոլորտի նպաստակալին ձևավորմանը: Միաժամանակ, հատուկ աշխատանք է տարվում, որպեսզի այն լինի հնարավորինս թափանցիկ, հասարակության անմիջական ներգրավվածությամբ և տեղեկացվածությամբ: Այդ առումով, արվում է ամեն ինչ, որպեսզի հասարակությունն օբյեկտիվորեն իրազեկված լինի ԻՊԲ մարտական գործողությունների վերաբերյալ: Մարտական գործողությունների ընթացքում զոհվածների և վիրավորների մասին անհապաղ անուն առ անուն հաղորդվում է լրատվամիջոցներով, համարելով, որ այդ հանգամանքն անմիջականորեն առնչություն ունի հասարակության վստահության հետ: Այդ առումով, ոչ օբյեկտիվ, քողարկված կամ աղավաղված տեղեկատվության տարածումը էական և անդառնալի բացասական ազդեցություն կունենա երկրի զինված ուժերի հեղինակության, հետևապես՝ մարտունակության վրա:

Իսրայելական լրատվական աղբյուրների համաձայն, Իսրայելի պաշտպանության բանակը նախատեսում է փոխել երկրի ՋՈՒ զոհված զինծառայողների վերաբերյալ տեղեկատ-

վության հրապարակման կարգը: Հնարավոր այդ փոփոխության պատճառը սոցիալական ցանցերում նման տեղեկատվության կայծակնային արագությամբ տարածումն է: Փոփոխված նոր կարգով երկրի զինված ուժերի հրամանատարությունը զոհվածների վերաբերյալ տեղեկատվությունը կհանրայնացնի՝ նախքան այդ մասին զոհվածի ընտանիքի անդամներին տեղեկացնելը:

Հիշեցնենք, որ ներկայում գործում է այն սկզբունքը, որի համաձայն՝ զոհված զինծառայողների վերաբերյալ տեղեկատվությունը հանրայնացվում է միայն զոհվածի ընտանիքի անդամներին այդ մասին տեղեկացնելուց հետո¹:

Չոհվածների ընտանիքների անդամների հետ հոգեբանական և այլ տեսակի աջակցման նպատակով գոյություն ունի ՁՈւ հասուկ վարչություն:

Հրեական պետականության վերականգնումը ժողովրդի մեջ դիտվում է որպես հնարավորություն՝ բացառելու հրեության պատմության ողբերգական էջերի, տվյալ պարագայում՝ Հոլոքոստի կրկնությունը: Այդ ըմբռնումով համարվում է, որ գտնվելով հակառակորդ երկրների մշտական ռազմական սպառնալիքների ներքո՝ Իսրայել պետությունը, համայն հրեությունը և, մասնավորապես, նրա զինված ուժերը պարտադրված են և պետք է մշտապես լինեն բարձր մարտական վիճակում: Իսրայելում և համայն հրեության մեջ հաճախ են մեջբերում հետևյալ կարգախոսը՝ ***«Իսրայելը չի կարող թույլ տալ նույնիսկ մե՛կ պարտություն»:***

¹ СМИ: ЦАХАЛ взвешивает возможность изменения порядка публикации сообщений о гибели солдат, http://newsru.co.il/israel/01nov2017/idf_0014_7000.html

ԻՊԲ հրամանատարությունը կարևորում է զինծառայողների ընտանեկան հիմնահարցերը: Երկրում գործում են բազմաթիվ քաղաքացիական և զինվորական կազմակերպություններ, որոնք ակտիվ մասնագիտական գործունեություն են իրականացնում երկրի զինծառայողների ընտանիքներին (սոցիալ-հոգեբանական, ֆինանսական և այլն) աջակցելու գործում: ԻՊԲ հրամանատարության կողմից հետևողական ջանքեր են գործադրվում ամուսնացած զինվորականների շրջանում ամուսնալուծությունների աստիճանական աճի զսպման ուղղությամբ, ինչը վերջին տարիներին մտահոգիչ միտումներ է արձանագրում: Խնդիրն այն է, որ արական սեռի զինվորականները զինծառայության ծանրաբեռնվածության պատճառով բավական քիչ ժամանակ են տրամադրում իրենց ընտանիքներին, ինչը հաճախ հանգեցնում է ամուսնալուծությունների թվաքանակի մեծացմանը: Մտահոգիչ է համարվում նաև զորացրված սպաների շրջանում ամուսնալուծությունների վիճակագրությունը, որը հիմնականում առաջանում է երկար տարիների զինծառայության ընթացքից հետո սոցիալ-հոգեբանական առումով ընտանեկան միջավայրում աղապտացվելու դժվարության պատճառով: Հետևապես, ամուսնալուծությունների զսպման ուղղությամբ վերջին տարիներին երկրի զինվորական հրամանատարությունը կիրառական նշանակության մի շարք ծրագրային նախաձեռնություններ է իրականացնում: Մասնավորապես, գործում է սպաների ընտանիքների աջակցման նախագիծ, որի աշխատանքների կազմակերպմանն ու կոորդինացմանն ակտիվորեն ներգրավված են նաև բանակի հոգևոր սպասա-

վորները և Իսրայելի ՋՈՒ Գլխավոր շտաբի պետին կից կին զինծառայողների հարցերով վարչությունը:

Ինչպես հայտնի է, տարբեր երկրների ղեկավարությունների կողմից բազում նախաձեռնություններ են արվել իրենց զինված ուժերում վնասակար սովորությունների և առաջին հերթին՝ ծխելու ավանդույթը վերացնելու ուղղությամբ: Այդ հարցում նշանակալից դերակատարությամբ է հանդես գալիս Իսրայել պետության ղեկավարությունը: Ու նաև այդ իսկ պատճառով ԻՊԲ հրամանատարությունը վճռական քայլեր է ձեռնարկում զինծառայողների շրջանում ծխելու ավանդույթն արմատախիլ անելու ուղղությամբ, որի համատեքստում իրականացվում են մի շարք կանոնավոր ծրագրեր և միջոցառումներ: Օրինակ, գործում է «Դադարեցրո՛ւ ծխելը» նախաձեռնությունը, որն իրականացվում է ՋՈՒ տարբեր զորատեսակների զորամասերում: Իրականացվում է նաև «ԻՊԲ վազքի խումբ» նախաձեռնությունը, որը վազքի միջոցառումների շնորհիվ օգնում է զինծառայողներին ավելի դյուրին ու արագ հրաժարվել ծխելու սովորությունից: Հատկանշական է այն հանգամանքը, որ վերջին տարիների ընթացքում ԻՊԲ բարեփոխումների շարքում «ծխախոտազերծ բանակ»-ի ստեղծման համար կատարվող ջանքերն ի վերջո պսակվել են դրված նպատակի կատարմամբ:

4. ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ՝ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ԻՊԲ-ում տիրում է այն համոզումը, որ զինծառայության կազմակերպման գործընթացի արդյունավետությունը սկսվում է *նորակոչիկի կենսապայմանների ապահովման* համապատասխան մակարդակից, քանի որ նորակոչիկը, համալրելով զինված ուժերի շարքերը, զինվորական առօրյային *սոցիալ-հոգեբանական ադապտացման* փուլ է անցնում: Ադապտացման այդ ժամանակահատվածը պայմանականորեն անվանել են *«առաջին տպավորությունների շրջան»*՝ համարելով, որ նորակոչիկի ադապտացման փուլից և առաջին տպավորություններից է կախված նրա հետագա զինծառայության արդյունավետությունը: Այսպիսով, ԻՊԲ հրամանատարությունը զինված ուժերի համակարգի մարտունակության ապահովման համար առանձնակի ուշադրություն է դարձնում նորակոչիկների զինվորական կենսապայմանների, առողջ սննդի ապահովման, նորակոչիկի ու նրա ընտանիքի սոցիալական ապահովության հիմնահարցերին: Այդ բոլորով հանդերձ, ըստ էության, նորակոչիկը զինծառայությանը սոցիալ-հոգեբանական ադապտացման հարցում զինված ուժերի, թերևս, ամենախոցելի հատվածն է:

ԻՊԲ-ում հատուկ նշանակություն է տրվում զինվորական սուբորդինացիայի կանոնների պահպանմանը:

Յուրաքանչյուր գնդում **գործում է զինծառայության պայմանների հարցերով հատուկ լիազորված պատասխանատու (մեծ մասամբ՝ կանայք)**, որի գործառույթների շրջանակներում է զինվորների ներկայացրած բողոքների քննումն ու լուծումը: Այդ պաշտոնյայի գործառույթներից է նաև տվյալ զորամասի հրամանատարական կազմի կողմից լիազորությունների չարաշահման, անարդարության և տարբեր խախտումների հետ կապված միջադեպերին ընթացք տալը: Նա զբաղվում է նաև զինվորների ընտանեկան խնդիրներով:

Բացի այդ պաշտոնյայից, գնդի զինվորականները զինծառայության պայմանների հետ կապված խնդիրների, գանգատների պարագայում կարող են դիմել նաև **«զինծառայողների բողոքների քննման հարցերով» տեսուչին**, ով իրավասու է քննել զինվորականների բողոքները՝ կապված զինծառայության պայմանների, հրամանատարների կողմից լիազորությունների չարաշահման, անբավարար կառավարման ու անարդարացի համարվող որոշումների կայացման հարցերին:

Որոշ զորամասերում կան հայրենադարձության հարցերով լիազոր ներկայացուցչի հաստիքով պաշտոնյաներ (որպես կանոն՝ կանայք): Լիազոր ներկայացուցչի գործառույթներից են հայրենադարձ զինվորականներին աջակցության ցուցաբերումը զինծառայության պայմաններին ադապտացման և զորամասում ինտեգրման, երբայերեն լեզվի ուսուցման հարցերում:

Իսրայել պետությունում և հրեությունում գործում են բազմաթիվ կազմակերպություններ, բարեգործական-կամավորական հիմնադրամներ, որոնք տարբեր հարցերով իրենց

աջակցությունն են ցուցաբերում ԻՊԲ առհասարակ զինված ուժերի մարտունակության բարձրացմանն ու զինծառայողների անձնական կարիքների բավարարմանը: Այդ կազմակերպությունների կողմից առանձնակի ուշադրություն է դարձվում ՋՈՒ-ում մարտական գործողություններ իրականացնող զինվորականներին: Բացի այդ հասարակական կազմակերպություններից, Իսրայելի զինված ուժերի ենթակայությամբ տարբեր կարգավիճակով գործում են մի շարք կազմակերպություններ և հիմնադրամներ, որոնք աջակցություն են ցուցաբերում զինվորականներին և նրանց ընտանիքներին, ինչպես, օրինակ, ԻՊԲ հիմնադրամը և Զինվորների աջակցման կազմակերպությունը:

ԻՊԲ-ն կապ է պահպանում կիբուցների (Իսրայելի գյուղատնտեսական համայնքներ, որտեղ գործում են սեփականության հանրայնացման կամ ընդհանուր սեփականության տնօրինման, աշխատանքի և սպառման հարցերում հավասարության սկզբունքները) ու երկրի տարբեր քաղաքների բազմաթիվ ընտանիքների հետ, որոնք ցանկություն ունեն միայնակ զինվորներին («միայնակ զինվորականի» կարգավիճակ ստանում են այն հայրենադարձ զինվորականները, որոնց ընտանիքները բնակվում են արտերկրում) արձակուրդի ժամանակ հյուրընկալել իրենց ընտանիքներում:

ԻՊԲ հետախուզական գորքերում գործում է մի ամբողջ գործառնաս առուտիզմ ունեցող զինծառայողների համար, որոնք տիեզերքից նկարված պատկերներով վերլուծում են տեղանքի փոփոխությունները: Համարվում է, որ նրանք կարևոր դեր են կատարում հնարավոր հարձակումների կանխման գոր-

ծում: Զինվորական ղեկավարությունը գտնում է, որ զգալի է նրանց դերը հետախուզական տվյալների ճշգրիտ վերլուծման և մշակման գործում:

Զինճառայության մասին օրենքը ենթադրում է պարտադիր զինճառայության երկու տեսակ՝ ժամկետային և պահեստագորային (պայմանագրային ճառայությունը չի մտնում այդ դասի մեջ):

Այդ օրենքը տարածվում է Իսրայելի քաղաքացիների (ներառյալ նրանց, ովքեր ունեն երկքաղաքացիություն և բնակվում են արտերկրում) և այլ երկրներից այստեղ մշտական բնակություն հաստատած քաղաքացիների վրա:

ԻՊԲ-ում բացառիկ խստությամբ է իրականացվում ժամկետային ճառայությունն ավարտածների անցումը պահեստագոր, որն, օրենքի համաձայն, հանդիսանում է պարտադիր զինճառայության տեսակ: Փորձը ցույց է տալիս, որ պահեստագորային զինճառայության ժամկետները կախման մեջ են ԻՊԲ անձնակազմի տվյալ ժամանակի համալրման անհրաժեշտությունից և նրա ֆինանսաբյուջետային հնարավորություններից:

Պահեստագորային զինճառայությունը, որպես կանոն, տևում է 2-5 շաբաթ՝ պայմանավորված գորքերի տեսակով և պահեստագորային զինճառայողի կոչումով:

Պահեստագորային զորամասերում զինճառայողների տեղաբաշխման և հաշվառման գործընթացում հաշվի են առնվում ժամկետային զինճառայության ընթացքում նրանց ձեռք բերած զինվորական մասնագիտացումները, հմտությունները, ինչպես նաև ֆիզիկական-առողջական, հոգեբա-

նական պատրաստվածության վիճակը:

2008թ. ընդունված Ձինձառայության մասին օրենքի համաձայն՝ 40 տարին լրացած շարքայինները, ինչպես և 45 տարեկան սպաները, որպես կանոն, ազատվում են պահեստազորային ծառայությունից: Ինչ վերաբերում է կանանց, ապա պահեստազորային զինծառայությունից ազատվում են ամուսնացած և 24 տարին լրացած կանայք:

ԻՊԲ-ում պարտադիր ժամկետային զինծառայությունն ավարտած և պահեստազորային ծառայության անցած երիտասարդները, որոնք մասնակցում են բուհական նախապատրաստական «մեխինա» դասընթացներին, գլխավորապես հայրենադարձ հրեաներից են: Այդ դասընթացների ուսանողները, որպես կանոն, յուրաքանչյուր ուսումնական տարի ծառայում են պահեստազորում առավելագույնը 12 օր, իսկ բուհեր ընդունված ուսանողները՝ համապատասխանաբար 21 օր:

Պահեստազորային զինծառայության ընթացքում զինվորական հավաքներից զինվորականները տարեկետման իրավունքից կարող են օգտվել տվյալ զինծառայողի աշխատանքային, կրթական-ուսումնական կամ առողջական հանգամանքների բերումով: Դրա համար անհրաժեշտ է դիմում ներկայացնել համապատասխան հանձնաժողովին:

Ձինձառայության մասին օրենքի համաձայն, «զինծառայողը, ծառայելով պահեստազորում 2 օր և ավելի (հատուկ զորամասերում՝ 1 օր և ավելի), ստանում է դրամական փոխհատուցում» Ազգային ապահովագրական տեսչության կողմից¹:

¹ Ведомство национального страхования,
https://www.bt.gov.il/RussianHomePage/Odot_ru/Pages/default.aspx

Ազգային ապահովագրական տեսչության կողմից պահեստագորային զինծառայության համար զինվորականներին վերոնշյալ դրամական փոխհատուցման տրամադրումից զատ, ***գործում է նաև երկրի անվտանգության ամրապնդման գործում ներդրում ունենալու համար պահեստագորային զինծառայողների դրամական փոխհատուցման հատուկ զինվորական համակարգ, որի ֆինանսական ծավալները կախված են տարվա կտրվածքով տվյալ զինծառայողի անցած պահեստագորային զինծառայության օրերի քանակից:***

Իսրայել պետությունը զգալի ֆինանսական, սոցիալական, կրթական և այլ աջակցություն է ցուցաբերում նաև զորացրված զինվորներին և նրանց ընտանիքներին: Այդ աջակցությունը տարածվում է երկու պարտադիր ծառայության տեսակների վրա՝ ժամկետային և պահեստագորային: Երկրի ղեկավարությունը միջոցներ է ձեռնարկել ժամկետային և պահեստագորային պարտադիր զինծառայություն անցած և զորացրված զինվորներին զորացրմանը հաջորդող 5 տարիների ընթացքում ֆինանսական-սոցիալական աջակցություն ցուցաբերելու համար: 1994թ. ընդունված Ջորացրված զինվորների մասին օրենքի համաձայն՝ զորացրված զինվորն արտոնությունների իրավունք ունի, եթե նա ԻՊԲ-ում, սահմանապահ զորքերում, ոստիկանությունում անցել է ժամկետային պարտադիր ծառայություն 12 և ավելի ամիս: Ջորացրված զինվորները, որպես կանոն, աշխատանքի տեղավորման իրավասությունների հարցում ունեն հստակ առավելություններ: Այն զորացրված զինվորը, որը չի կարողացել գտնել աշխատանք, զորացրման օրվանից 70 օրվա ընթացքում Ազգային

ապահովագրության տեսչությունից իրավունք ունի ստանալ գործազրկության նպաստ: Այն գորացրված զինվորները, ովքեր մտադիր են ուսումը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում, կարող են ձեռք բերել հատուկ պայմաններով վարկ կամ կրթաթոշակ: Ջորացրված զինվորներին սոցիալական, կրթական և այլ ոլորտներում տրվող արտոնությունները նպատակաուղղված են զինվորների քաղաքացիական կյանքի առաջին փուլերում վերջիններիս աջակցման հարցերին: Այդ արտոնությունները ներառում են.

ա/ գորացրման ժամանակ դրամական նվեր (դրամական նվերը փոխանցվում է գորացրված զինվորի անձնական բանկային հաշվին՝ գորացրման օրվանից 20-60 օրվա ընթացքում),

բ/ արտոնություններ եկամտահարկի վճարման հարցում,

գ/ անձնական բանկային հաշվին ավանդի ձևակերպում (ավանդի ձևակերպումն իրականացվում է զինվորի գորացրման օրվանից 20-60 օրվա ընթացքում): Ֆինանսական ավանդը նախատեսվում է հետևյալ մի քանի նպատակներով.

- Կրթական՝ միջնակարգ կրթությունն ավարտելու, բուհում դասընթացների համար,
- մասնագիտական վերապատրաստում ուսումնական հաստատությունում,
- բնակարանի գնում,
- սեփական մասնավոր գործի նախաձեռնում և հիմնում կամ էլ մասնավոր ձեռներեցությունում, որպես գործընկեր, մասնակցության ապահովում,

- ընտանիքի կազմում ծառայության ընթացքում կամ ծառայության ավարտից հետո:

Նշենք, որ նշյալ նպատակներով ֆինանսական միջոցները գորացրված զինվորը կարող է ձեռք բերել գորացրման օրվանից 5 տարվա ընթացքում: Եթե ֆինանսական միջոցները չեն օգտագործվել այդ 5 տարիների ընթացքում, ապա դրանք կարելի է հանել բանկային հաշվից գորացրման օրվանից մինչև 7 տարին լրանալը՝ հնարավորություն ունենալով օգտագործել ֆինանսական միջոցները ցանկացած նպատակով:

դ/ ուսման, սեփական մասնավոր ձեռներեցության և այլ նպատակներով աջակցության ցուցաբերման հավելյալ ֆինանսավորում: Նախատեսվում է աջակցություն հետևյալ ոլորտներում.

- Ուսուցում բուհական նախապատրաստական բաժիններում (ուսուցման վճարում, ուսուցման ընթացքում նպաստի տրամադրում),
- մասնագիտական վերապատրաստում (աջակցություն երկրի Արդյունաբերության և տնտեսության նախարարության կողմից պաշտոնապես ճանաչված ուսումնական հաստատություններից որևէ մեկի նախապատրաստական բաժնում կամ «կրտսեր ինժեներ», «տեխնիկ» մասնագիտություններով առաջին կուրսում՝ ուսումնական տարվա վճարի 90%-ի չափաքանակով),
- առաջին գիտական աստիճանի ձեռքբերման համար նախատեսված ուսման համար (ուսման առաջին տարում երկրի ծայրամասերում բնակվողների կամ ծայրա-

մասերում գտնվող բուհերում ուսում ստանալու ցանկություն հայտնողների համար հատուկ կրթաթոշակների նախատեսում):

Պետությունը զորացրված զինվորներին նախատեսում է աջակցություն ցուցաբերել այդ թվում և քաղաքային-համայնքային հարկատեսակներից ազատման տեսքով: Երկրի օրենսդրության համաձայն՝ ժամկետային պարտադիր զինծառայության մեջ գտնվող զինվորը ժամկետային ծառայության ավարտից հետո 4 ամսվա ընթացքում ևս ազատվում է քաղաքային հարկատեսակի վճարումից՝ պայմանով, որ նա հանդիսանում է բնակարանի սեփականատերը կամ նրա անունով է ձևակերպված վարձակալության պայմանագիրը:

Իսրայելի Արդյունաբերության և տնտեսության նախարարության մասնագիտական վերապատրաստման վարչությունն առաջարկում է մասնագիտացում ձեռք բերել զորացրված զինվորներին մի շարք մասնագիտական դասընթացների միջոցով այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ շինարարությունը, համակարգչային մասնագիտացումը, վարչական կառավարումը և այլն: Այդ դասընթացների արժեքը սուբսիդավորված է և կախված է դրանց տեսակից ու տևականությունից:

Իսրայել պետությունը նախատեսում է հատուկ արտոնությունների տրամադրում զորացրված միայնակ զինվորների և «աջակցության ձեռքբերման իրավունք ունեցող» կարգավիճակ ստացած զինվորների համար: Վերջիններիս հա-

մար հատուկ արտոնությունները կիրառվում են հետևյալ ոլորտներում.

- միջնակարգ կրթության ավարտման և **հասունության վկայագրի** (Իսրայելում միջնակարգ կրթությունը, որպես կանոն, նախապատրաստում է դպրոցականներին հասունության վկայագրի ձեռքբերման համար քննությունների նախապատրաստման և հանձնման ընթացակարգ, որոնք ենթադրում են մի քանի առարկաներ՝ երբայերեն, մաթեմատիկա, գրականություն, Մովսեսական Սուրբ գրքեր և այլն) ձեռքբերման համար քննությունների նախապատրաստման աջակցում,
- հոգեչափական քննության հանձնման նախապատրաստում հարակից հարցերում:

Զորացրման նախօրեին միայնակ զինվորների համար կազմակերպվում են տեղեկատվական հատուկ հավաքներ՝ նպաստելու նրանց քաղաքացիական ինտեգրմանը:

5. ԻՊԲ-ՈՒՄ ՁԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ

Բարայելական բանակում զինվորականների մոտիվացիան ունի ազգային-հոգևոր հենք: Ելնելով դրանից՝ ներկայիս աշխարհասփյուռ հրեության համար երկհազարամյա պետականագուրկ գոյապայքարից, պատմական ողբերգական բազում էջերից հետո հոգևոր պարտքի կատարում և միաժամանակ պատիվ է համարվում պետությանը վերստին ծառայելը, երկրի պաշտպանության ապահովման գործին հարկ եղած չափով նպաստելը:

Զինծառայության ընթացքում, պահպանելու և նույնիսկ ավելի յուրացնելու համար, ուսումնական ծրագրերում առանցքային տեղ են հատկացվում եբրայերենի ուսուցմանը, ազգային պատմությանը, գաղափարախոսությանը, հրեության ազգային ինքնության և ինքնագիտակցության և, մասնավորապես, Հոլոքոստի որևէ կրկնության անթույլատրելիության) բացառման՝ կամքի, պարտականության, քաղաքականության՝ որպես գաղափարի ամրապնդմանը: Ինչպես նշում են ԻՊԲ-ում, «երկրի զինված ուժերում շատ են «իդեալիստ զինվորները» (հեղ., այն է՝ զինծառայության հոգևոր մոտիվացիա և իդեալիստական-հայրենասիրական գաղափարներ ունեցող զինծառայողներ, ովքեր ԻՊԲ-ում զինծառայությունը դիտում են որպես հրեա հոգևոր «առաքելության» կա-

*ընտրագույն բաղադրիչ), որոնք հիմնականում սերում են կրոնական-ավանդապաշտ, ինչպես նաև հայրենադարձների ընտանիքներից: «Բղեալիստ զինվորականները», որպես կանոն, առաջամարտիկներ են, իրենց հետևից կարողանում են տանել թիմին, մշտապես ձգտում են լավագույն նվաճումների ու ինքնակատարելագործման»: Եվս մեկ օրինակ զինծառայություն անցած զինվորների անձնական տպավորություններից՝ «Իսրայելի զինված ուժերում զինվորներին միավորում է հայրենասիրության բարձր զգացումը: Ձինվորների շարքում կան այնպիսիք, որոնք **ծառայության են գնում արդեն ստեղծված մոտիվացիայով, մյուս մասն էլ զինծառայության մեջ է գտնում իր մոտիվացիան**: Իսրայելի պաշտպանության **բանակում զգում ես քեզ ինչպես տանը**: Կարող ես միշտ հույսդ դնել թիմակցիդ օգնության և աջակցության վրա: Չնայած կանոնադրության և կարգապահության խստությանը՝ **բանակն ընտանիք է**: **Չինծառայությունն ինձ տվեց մարդկանց համար պատասխանատվության զգացում, պատասխանատվության զգացում նաև իմ արարքների համար**: Ես չեմ վախենում մահից: Ես հրաշալի հասկանում էի ինչի եմ գնում, և եթե զոհվեմ, ապա ինձ մտահոգում է, թե դա ինչ ցավ կլինի հայրենիքիս, ընտանիքիս, ընկերներիս, սիրելիներիս համար»:*

Չինծառայություն անցած մեկ այլ սպայի տպավորություններից՝ *«Իսրայելի պաշտպանության բանակը հաղթում է ոչ թե ֆիզիկական ուժով, այլ իր ռազմարվեստով, սպառազինություններով, ինչպես նաև հայրենասիրությամբ ու **հոգևոր, գաղափարական, բարոյական և ազգային-հայրենասիրական մոտիվացիայով**»:*

Զինվորի այդ *մտտիվացիան նաև սոցիալական և հասարակական է*, քանի որ ԻՊԲ-ում ծառայությունը նպաստում է երկրում նրա սոցիալական-հասարակական ինտեգրմանը, զինծառայությունից հետո սոցիալ-հասարակական կարգավիճակի բարձրացմանը: Զինծառայության ընթացքում զինվորականն օգտվում է զինված ուժերի ընձեռած տարբեր արտոնություններից: *Օրինակ, ավարտելով զինվորական ծառայությունը՝ քաղաքացին ունի հստակ արտոնություններ ուսուցման, աշխատանքի տեղավորման, պաշտոնի ստանձնման, առողջապահական ապահովագրության և այլ հարցերում:*

Այս հարցում, զինվորականներից մեկի դիտարկմամբ, *«Իսրայելում բարեկեցիկ, ֆինանսապես կայացած ընտանիքների երիտասարդների զինծառայությունը դիտվում է որպես քաղաքական վերնախավի մաս դառնալու և այնտեղ դիրքերը պահպանելու կարևոր նախապայմաններից մեկը:* Որպես կանոն, ծառայությունը նրանք անցկացնում են մարտական ամենապատասխանատու խնդիրների կատարման կարողությամբ»: *Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Իսրայելի բարձրաստիճան քաղաքական-ռազմական գործիչներից շատերի զավակները շարունակել են իրենց ծնողների գործունեությունը՝ մասնագիտանալով զինվորական ծառայության տարբեր բնագավառներում: Նրանց այդ որոշման համար կարևոր դեր է կատարում ծնողների սպայական ու ընտանեկան պատվի և զինվորական-սպայական ավանդույթի պահպանման բարոյական պարտաճանաչությունը, դրա հետ նաև՝ հայրենասիրության մղումը:*

Ոչ պաշտոնական տվյալներով, ԻՊԲ-ում մարտական գործողություններ իրականացնող անձնակազմը կազմում է 25-30%, որոշ տեղեկատվական աղբյուրներում նշվում է նաև 15%: Ըստ երևույթին, սա շատ կարևոր վկայությունն է այն բանի, որ մարտական գործողությունները վստահվում են միմիայն համապատասխան վերապատրաստում ու նաև անձնական որոշակի տվյալներ ունեցողներին: Նրանք համարվում են պրոֆեսիոնալներ:

Հատկանշական է, որ *զինծառայողի կողմից մարտական գործողությունների վարման գործընթացին մասնակցություն ունենալու համար անհրաժեշտ է նաև զինծառայողի ծնողների համաձայնությունը, թեև* ԻՊԲ մարտական գործամասերում զինծառայությունն իրականացվում է կամավոր հիմունքներով: Եվ դա, ըստ երևույթին, որովհետև Իսրայել պետությունում և ընդհանրապես հրեությունում ավագ սերունդները մշտապես ձգտել են նոր սերունդներին փոխանցել հրեության հոգևոր-բարոյական, գաղափարական ժառանգությունը, դաստիարակել նրանց հրեության հոգևոր-ազգային, հայրենասիրական ոգով, ու այդ իսկ պատճառով հրեա ծնողներից շատ-շատերն են պատիվ համարում ԻՊԲ մարտական գործողություններ իրականացնող գործամասերում իրենց գավակների զինծառայությունը:

Գործող կանոնադրության մեկ այլ հոդվածով՝ ընտանիքի միակ երեխան հանդիսացող գորակոչիկը չի կարող ներառվել մարտական գործողություն կատարող գործամասում՝ առանց ծնողների համաձայնության:

Զինձառայության ընթացքում իրականացվող գորավար-
ժությունների կամ տեսական դասընթացների ժամանակ
զինվորական հրամանատարությունը հնարավորություն է
տալիս գորամասում ընդգրկված զինվորներին ինքնուրույն
որոշումներ կայացնել: Կարևոր գործոն՝ զինձառայության
թիմային գաղափարի զարգացման, զինվորների ինքնագնա-
հատման համար: Այդ առումով զինվորականներից մեկը
նշում է. «Հրամանատարը հրաման է արձակում գրավել
տվյալ բարձունքը, սակայն թե ինչ եղանակով՝ *դա մեզ է
թողնված որոշելու, այդ խնդիրը քննարկվում է և որոշում է
ընդունվում թիմային կարգով: Եվ հրամանատարները զինվո-
րի հետ հավասարապես կիսում են առկա թե՛ ֆիզիկական,
թե՛ հոգեբանական ծանրաբեռնվածությունները:* Դա զգալիոր-
քեն օգնում է փոխադարձ հարգանքի հաստատմանը: Թիմա-
յին աշխատանքն ընդհանրապես դիտվում է որպես կոլեկտի-
վի ամրապնդման, ընդհանուր նպատակի ու դրա իրագործ-
ման մարտական խնդիրների կատարման էական գործոն:
Այդ երևույթի կարգախոսն է՝ *առանց թիմի դու ոչինչ ես*»:

**6. ՀՀ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ
ՓՈՐՁԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՈՒՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ.
ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**

ԻՊԲ-ում հատկապես հոգևոր-բարոյական արժեքների կիրառման փորձը բազմաթիվ երկրների բանակների ուշադրությունն է գրավել և այս կամ այն կերպով ու չափով կիրառության է արժանացել: Մեծ հավանականությամբ այդ փորձը կարող է ուսանելի և որոշ առումներով կիրառելի լինել նաև ՀՀ զինված ուժերում: Բնականաբար, խոսքն ամենևին չի վերաբերում իսրայելական փորձի մեխանիկական ընդօրինակմանը: Օրինակ՝ զինծառայությունում ***ընտանիքի գաղափարի ընկալումը***, այդ իմաստով հայությունն իր ազգային-հոգևոր կերտվածքով լինելով ավանդապաշտ, դարերի ընթացքում կարողացել է հավատարիմ մնալ իր ազգային-հոգևոր և բարոյական տոհմիկ արժեհամակարգին՝ կարողանալով իր ինքնությունն ու գոյությունը պահպանել նաև այդ ավանդապաշտության՝ հատուկ պահպանողականության արժեքային ընկալումների ու կիրառության շնորհիվ, որի հիմքում եղել է հայ ***ընտանիքի գաղափարը***: Ակնհայտ է, որ հայության համար ընտանիքն այն արժեքաբանական-գաղափարական միջուկն է, որը, չնայած մերօրյա համաշխարհային

զլոբալացման գործընթացների ազդեցության միտումներին՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, կրթական ու այլ փոփոխություններին, այդուհանդերձ, շարունակում է պահպանել իր տոհմիկ ինքնությունը, իր տեսակը, որով և իր գոյությունը: Այդ իմաստով, երկրի զինված ուժերի անձնակազմի հոգևոր-բարոյական դաստիարակության հիմքում **«ջոկատը ընտանիք է, թիմը ընտանիք է, բանակը ընտանիք է»** մոդելը կարող է բավական արդյունավետ կիրառություն գտնել:

Այդ դերի և նշանակության գաղափարի հստակ ըմբռնումը, գիտակցությունը մեծ հավանականությամբ կարող են դրական մեծ ազդեցություն ունենալ նաև յուրաքանչյուր հայի պարտաճանաչության և պատասխանատվության բարձրացման համար:

Այդ դերի և նշանակության գործնականացումը լավագույնս կարող է կատարվել անձնակազմի հետ տարվող աշխատանքի շրջանակում:

Կարևորագույն պայմաններից է այն, որ ***մարտական գործողությունների իրականացումը վստահվի միմիայն համապատասխան վերապատրաստմամբ զինվորականներին:***

Զինվորականության շրջանում զինձառայության կազմակերպման առանցքային հարցերից մեկը վերաբերում է զինվորի մոտիվացիային: ***Զինվորը պետք է լինի այն զգացման կրողը, որ ինքը բարձրագույն արժեք է հայ հանրության, նրա յուրաքանչյուր ներկայացուցչի և Հայաստանի համար:*** Արդյունավետ կարող է լինել զինվորի մեջ այն ***զգացման սերմանումը, որ Հայաստանը պարտադրված է լինել հաղթական, պատերազմը մեզ պարտադրված է, ուստի երկամյա զինձա-***

ռայությունը կյանքի մի հատվածն է երկրի պաշտպանության գործում յուրաքանչյուր քաղաքացու կողմից մասնակցության ապահովման առումով:

Մոտիվացիան կարող է լինել զինվորի այն զգացումը, որ նա ծառայում է և զինվորական գործում մասնագիտանում է հանուն իր հարազատների, իր ընտանիքի, նրանց անվտանգության ապահովման, պետք է ունենա բարձր պատասխանատվության զգացում իր հարազատների անվտանգության ապահովման հարցում:

Զինվորի համար, երկրի պաշտպանության գործում հոգևոր-ազգային, գաղափարական-բարոյական հարցերից զատ, կարևորագույն մոտիվացիաներից մեկը կարող է լինել տարբեր *արտոնությունների ընձեռումը զինծառայությունից հետո երկրի սոցիալ-հասարակական, պետական-քաղաքական, գիտակրթական, առողջապահական ոլորտներում ինտեգրման համար* (բարձր աշխատավարձ, քաղաքացիական կյանքում պաշտոնի ստանձնում, առողջապահական ապահովագրության ճկուն համակարգ, արտոնություններ գիտակրթական ոլորտում):

Բարկեն Վարդանյան,
Կարեն Վերանյան

ԻՍՐԱՅԵԼՈՒՄ ՀՐԵՈՒԹՅՈՒՆ-ԲԱՆԱԿ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՈԳԵՎՈՐ-
ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ

Տեխնիկական խմբագիրներ՝
Խոնարհիկ ԶԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂԱՍՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ պայմ. 4 տպ.մամուլ:
Տպաքանակը՝ 300: Տառատեսակը՝ Sylfaen:
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում: